ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ՂԱՐԱԲԱՂԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (1902—1905)

ՍՄԲԱՏ ԱՎԱԳՅԱՆ

XIX դ. վերջերին Ղարաբաղի աշխատավորության քաղաքական գիտակցության բարձրացման և նրան հեղափոխական գաղափարներով զինելու գործում մեծ դեր խաղացին Շուշիի առաջադեմ սովորող-երիտասարդների ստեղծած կազմակերպությունները և տպագիր օրգանները։ Հաղորդակից լինելով հեղափոխական մտքերին և կարդալով մեծ մտածողների գործերը, նրանք զինվում էին տեսական գիտելիքներով, ծրագրեր մշակում, դիմում գործնական քայլերի։ Այս մասին հետաքրքիր հուշեր է պատմում հին բոլշևիկ, նշանավոր պատմաբան Աշոտ Հովհաննիսյանը։ Նա գրում է. «90-ական թվականների վերջերում հույզերի ու լույսերի այդ աշխարհում էր ապրում նաև Շուշի քաղաքի «հեղափոխական» երիտասարդությունը։ Նոր սերնդի մտայնությունը տակավին չէր բոլորել իր կյանքի հերոսական շրջանը։ Հղի հանդուգն ծրագրերով՝ ստեղծվեց հոգևոր մի մթնոլորտ, որտեղ ծնվում էր և սնվում նաև դրպրոցում սովորող մատաղ աշակերտությունը։

Հասակակից ընկերներ էին, տոգորված վառ ցնորքներով, լի եռանդով, պատրաստ ամեն զոհաբերության... Դպրոցից դուրս կար ժողովատեղի, որտեղ հետևում էին քաղաքական գրականության, լսում էին զեկուցումներ «երկրի» մասին, վեճի բռնվում, որոշումներ ընդունում, խմբագրում ձեռագիր թերթը՝ «Կոկոնը»։ Մոտ հինգ տարվա կյանք ունեցավ «Կոկոնը»[1]։ Այնուհետև Աշ. Հովհաննիսյանը պատմում է, որ առաջադեմ երիտասարդներից կազմված խմբակը կրում էր «Կոկոն» անունը և գործում էր բավականին եռանդուն։

«Կոկոնի» ղեկավարներից էր Ալեքսանդր Ծատուրյանը (Ալ. Ռուբենի ծածկանվամբ), որն իր ընկերների շրջանում հայտնի էր «Ծատուր» անունով։ Խորհելու, դատելու, տրամաբանելու ընդունակության, ուղղամտության ու սկզբունքայնության համար նա վայելում էր շատերի համակրանքն ու հարգանքը։ Այս մասին Աշ. Հովհաննիսյանը գրում է. «Ծատուրը ամենից ուշագրավ դեմքն էր խմբակի՝ խոսելու և գրելու ձիրքով, խորհելու և վիճելու կարողությամբ։ Պակաս ազդու չէր արտաքինը։ Այսօր իսկ պատկերանում է նա ինձ աշակերտական գորշ բլուզի մեջ. հասակը պարթև, քայլվածքը դանդաղ ու խոհուն, նայվածքը խորաթափանց, ժպիտը հեգնոտ։ Իր շուրջն էր փռվում ընկերների պատկառանքը, ակնածությունը։ Եվ հասկանալի է։ Դերձակի որդին գալիս էր գրչի ու խոսքի սուր ասեղներով և տրամաբանական ամուր դերձանով իրար կցելու լսածն ու կարդացածը՝ ընկերների մերկ հույզերը մտքի հանդերձով ծածկելու համար»[2]։ Ալ. Ծատուրյանը և «Կոկոնի» մյուս ղեկավար-

---

1 «Կոմունիստ» (Բաքու), 13. IV. 1923։

2 Աշոտ Հովհաննիսյան, Երկու բնութագիր, Երևան, 1927, էջ 20—21։

ներն իրենց դասընկերներին մղում էին արդարության համար պայքարի ուղին[3]։

Ղարաբաղի հասարակության քաղաքական գիտակցության բարձրացմանը նպաստում էին նաև այն երիտասարդները, որոնք սովորում էին երկրի տարբեր քաղաքների միջնակարգ և բարձրագույն դպրոցներում։ Ամռան ամիսներին վերադառնալով հայրենի քաղաք, նրանք իրենց հետ բերում էին հեղափոխական գաղափարներ և կազմակերպում մարքսիստական խմբակներ։ Այդպիսի անլեգալ խմբակ է ստեղծվում 1902 թ. Շուշիում, որի մասին 1903 թ. փետրվարի 5-ին հաղորդվում է Թիֆլիսի նահանգի ժանդարմական վարչության պետի զեկուցագրի մեջ[4]։ Ցարական պահնորդական մարմինները բազմիցս նշել են, որ հատկապես Շուշին «վտանգավոր է» դարձել հակապետական գաղափարներով, որ այստեղ են թափանցում հեղափոխական գրքեր, թռուցիկներ, կոչեր, թերթեր, ամսագրեր։

Գավառում հեղափոխական գաղափարների տարածման գործում մեծ դեր է խաղում լենինյան «Իսկրան»։ 1901—1903 թթ. այդ թերթի առանձին համարները գավառի մարդկանց են հասնում ամենից առաջ Վ. Ի. Լենինի աշակերտ Բ. Կնունյանցի միջոցով։ «Իսկրայի» առանձին համարների ստացման մասին տեղեկանում է նաև ոստիկանական վարչությունը։ Թիֆլիսի նահանգային ոստիկանական վարչության 1902 թ. մայիսի 16-ի հաղորդման մեջ ուղղակի ասված է. «Շուշիի փոստ-հեռագրական գրասենյակը ներկայացրել է արտասահմանում ռուսական սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության հրատարակած հեղափոխական «Իսկրա» թերթի 1902 թ. ապրիլի 1-ի 19-րդ համարի տպագիր երկու օրինակները։ Ինչպես երևում է փոստային դրոշմից, ուղարկված են Լայպցիգից և Դարմշտատից՝ Շուշի քաղաքի բնակիչների անունով»[5]։

«Իսկրայի» գավառ թափանցելու մասին կան և այլ փաստեր։ Ստեփանակերտի պատմաերկրագիտական թանգարանում պահվում է «Իսկրայի» առաջին համարի բնօրինակը, որը հայտնաբերվել է 1946 թ. Ասկերանի շրջանի Սարուշեն գյուղի մի բնակչի մոտ։ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի Հաղրութի շրջանի Կեմրակուճ գյուղում պատահմամբ, մի լուսանկարի հետ, հայտնաբերվել է «Իսկրայի» մի այլ համար։ Այդ մասին լրագրող Ա. Վարդանյանը պատմում է. «Նկարի ետևը ծածկված էր խունացած թղթով։ Պոկում եմ, ահա նորից մի շերտ. այս արդեն սովորական լրագիր է։ Հանում եմ՝ «Իսկրայի» համարներից է։ Ինչպե՞ս է այն ընկել այս լեռնային գյուղը։ Ո՞վ էր նրա բաժանորդն ու առաջին ընթերցողը։ Մտածում եմ ու պատասխան չեմ գտնում։ Նորից նայում եմ լուսանկարին։ Ես գիտեմ, որ նա մեր բարեկամներից է, չեմ տեսել, որովհետև վախճանվել է 28 տարեկան հասակում, շատ-շատ տարիներ առաջ. Արսեն Տեր-Հովհաննիսյանն է։ Գիտեի նաև, որ ուսուցիչ է եղել մեր ձորակի գյուղերում։ Որոշեցի դիմել տարեց մարդկանց։ Ու չսխալվեցի։ Կեմրակուճում, ուր ապրել, աշխատել է Արսենը, հին կոմունիստներ շատ կան։ Դիմեցի նրանցից մեկին՝ 1919 թվականից ՍՄԿԿ անդամ Հայկ Դավթյանին։

— Զարմանալու ոչինչ չկա,— ասաց նա,— Արսեն Տեր-Հովհաննիսյանն

---

3 Նույն տեղում, էջ 20։

4 Центральный государственный исторический архив, ф. 4, д. 11, л. 13.

5 «Սովետական Ղարաբաղ», 19. II. 1967։

ավարտել է Շուշիի թեմական դպրոցը և ուսուցչությամբ էր զբաղվում մեր գյուղում։ Նա ժամանակի առաջադեմ մարդկանցից էր, ստանում էր մարքսիստական գրականություն, գիշերները՝ աղոտ լույսի տակ «Իսկրա» թերթ էր կարդում։ Լինում էր՝ փաթեթներ էր ստանում Ժնևից, Ռուսաստանի խոշոր քաղաքներից։ Ու այդ ամենը ինչպիսի՜ զգուշավորությամբ։ Մենք՝ նրա աշակերտներս, սիրում էինք մեր ուսուցչին, ամեն ինչում ընդօրինակում նրան։

Արսենը հաճախ էր զրուցում գյուղացիների հետ, պատմում լուսավոր ապագայի՝ ազատության, հավասարության, առատության մասին»[6]։

Այս ամենը վկայում է, որ լենինյան «Իսկրան» թափանցել է Ղարաբաղի ամենահեռավոր գյուղերն անգամ։

«Իսկրան» անդրադառնում էր Ղարաբաղի, մասնավորապես Շուշիի, բնակչության ծանր պայմաններին, իր ընթերցողներին հաղորդում, թե մարզի աշխատավորներն ինչպիսի մասսայական ցույցեր, միտինգներ են կազմակերպում ցարական կառավարության դեմ[7]։ Ժողովուրդը, գրում էր թերթը, «ամենուրեք զենքը ձեռքին էր դիմավորում ցարական աստիճանավորներին, ամենուրեք եղան ընդհարումներ զորքի հետ և ամեն մի քաղաքի իրադարձությունների մանրամասն նկարագրությունը խիստ կերկտրացներ թղթակցությունը։ Կնշենք հետևյալ բացարձակ ստույգ, չնայած կուրյոզային, բայց բնորոշ փաստը։ Անկարգությունները սանձելու համար Շուշի քաղաքում զորքերի հետ այնտեղ ուղարկվեց հրետանի, իսկ և իսկ ինչպես պատերազմի ժամանակ»[8]։ Կասկած չի հարուցում, որ այս թղթակցության հեղինակը քաջատեղյակ էր Կովկասի քաղաքական իրադարձություններին, գիտեր այնտեղ տեղի ունեցող խմորումների, հուզումների և ըմբոստացումների մասին։ Վերը հաղորդվող փաստը «Իսկրային» ուղարկած «Նոր թալան» վերնագրով թղթակցությունում օգտագործել է Բ. Կնունյանցը, որը հանդես է եկել «Կավկազեց» ստորագրությամբ[9]։

Ինչպես նշում էր «Իսկրան», «Երկրամասը հնազանդեցնելու համար կառավարության կողմից ձեռնարկված միջոցներից մեկը ուժեղացված պահպանություն մտցնելու մասին հայտարարությունն էր Անդրկովկասի ևս չորս քաղաքներում՝ Շուշիում, Նուխիում, Կարսում և Ելիզավետպոլում։ Հին, բայց քիչ օգնող միջոց»[10]։

Ղարաբաղի աշխատավորությանը հեղափոխական ոգով դաստիարակելուն նպաստում էին նաև Բաքվում և երկրի արդյունաբերական մյուս խոշոր կենտրոններում ծայր առած բանվորական հուժկու ելույթները։ Բաքվի բոլշևիկներն ադրբեջաներեն, ռուսերեն և հայերեն թռուցիկներում աշխատավորությանը կոչ էին անում միասնաբար պայքարել և՝ զենքը ձեռքից վայր չդնել՝ մինչև չկործանվի ցարիզմը։ Նրանք ոչ միայն հեղափոխական գրականություն և թռուցիկներ[11] էին ուղարկում Ղարաբաղ, այլև առանձին բոլշևիկներ Բաքվից գալիս էին այնտեղ և աշխատավորության շրջանում ագիտացիոն-քաղաքական

6 Նույն տեղում։

7 «Искра», 1.X.1903.

8 Նույն տեղում։

9 Նույն տեղում։

10 «Искра», 15.X.1903.

11 Դրանք մեծ մասամբ Շուշի էին հասնում հեղափոխականորեն տրամադրված գործակատարների միջոցով, որոնք Ռուսաստանի տարբեր քաղաքներից վաճառքի էին բերում արդյունաբերական ապրանքներ։

լայն աշխատանք կատարում։ Դրա շնորհիվ գավառի աշխատավորական զանգվածների զգալի մասը լավ էր հասկացել նաև ռուս-ճապոնական պատերազմի իսկական էությունը։ Այդ թալանչիական պատերազմի դեմ նրանք իրենց խորին զայրույթն արտահայտում էին տարբեր միջոցներով։ Այսպես, օրինակ, 1904 թ. աշնանը Շուշիում տեղի ունեցան հակապատերազմական ցույցեր, որոնք ուղեկցվում էին հեղափոխական երգերով ու կոչերով։ Ցուցարարների լոզունգներն էին. «Կորչի ինքնակալությունը», «Կորչի ճոճվող իշխանությունը», «Կեցցե հեղափոխությունը»[12] և այլն։

Հեղափոխական շարժումը Ղարաբաղում նոր լիցք ստացավ հատկապես 1905 թ.։ Դժգոհ լինելով ձեռնարկատերերի անմարդկային վերաբերմունքից, հուլիսին գործադուլ են անում Շուշիի և նրա մերձակա գյուղերում գտնվող մետաքսագործական ձեռնարկությունների բանվորները[13]։ Գործադուլավորներն առաջ են քաշում մի շարք պահանջներ, որոնք ուղղված էին ձեռնարկատերերի կամայականությունների դեմ և պահանջում էին բարձրացնել աշխատավորների կենսամակարդակը։

Գավառում եռանդուն գործունեություն ծավալեց 1905 թ. ստեղծված սոցիալ-դեմոկրատական խումբը, որն ամուր կապ էր հաստատել Վ. Ի. Լենինի և նրա ղեկավարած «Պրոլետարի» թերթի հետ։ Այդ խումբն ուներ նաև անլեգալ տպարան, որտեղ տպագրվում էին հեղափոխական կոչեր, թռուցիկներ։ Հուշագրավ է Ստեփանակերտի պատմաերկրագիտական թանգարանում պահվող «Բոլոր աշխատավորներին» վերնագրով[14] դիմումը, որը մերկացնում է դաշնակցության արկածախնդիր քաղաքականությունը։ Այս տպարանում է լույս տեսել նաև «Խաղ գործադուլում» թռուցիկը[15]։ Անլեգալ տպարաններ են ստեղծվում ոչ միայն Շուշիում, այլև գյուղական վայրերում։ Ինչպես գրել է «Մշակ» թերթը, «Շուշիի գավառի Ջամիաթ (Ննգի) գյուղում զորքերը խուզարկություն են կատարել և գտել են գաղտնի տպարան, մեծ քանակությամբ թռուցիկներ, արգելված գրականություն և թղթակցություններ, մի քանի պատրաստի ռումբեր և պայթուցիկ նյութեր»[16]։

Շուշիի սոցիալ-դեմոկրատական խումբը ղեկավարում էր Ղարաբաղի գյուղերում (Ջանախչի, Քարին տակ, Ջարդարաշեն և այլուր)[17] ծայր առած ըմբոստացումները (մասնավորապես 1905 թ. սեպտեմբերին)։ Գյուղացիները, ելնելով պայքարի, ոչնչացնում էին կալվածատիրական անտառները, փչացնում հարուստներին պատկանող ունեցվածքը, հրաժարվում նրանց հողերի մշակմանը և անասունների պահպանմանը մասնակցելուց։ Ավելին, գյուղացիները ավերում են խոշոր հողատեր Փիրում բեկի գինու գործարանը և այլ շենքեր։ Կովկասի փոխարքային ուղարկած հաղորդման մեջ նշվում է, որ գործարանի երկհարկանի շենքը լրիվ ավերվել է, ոչնչացվել է նկուղահարկերում գտնվող 25000 դույլ գինին[18]։

1905 թ. ղարաբաղցիները սոցիալ-դեմոկրատական խմբի օժանդակությամբ հնարավորություն են ունենում կարդալու լենինյան տպագիր օրգան-

12 «Սովետական Ղարաբաղ», 19. II. 1967։
13 Նույն տեղում։
14 Նույն տեղում։
15 Նույն տեղում։
16 «Մշակ», 1. III. 1906։
17 «Սովետական Ղարաբաղ», 19. II. 1967։
18 «История Азербайджана», Баку, 1960, с. 575.

ները (մասնավորապես «Վպերյոդը», «Պրոլետարին») և Բաքվում ու Թիֆլիսում լույս տեսնող առաջադիմական թերթերը, որոնք աշխատավորությանը, հատկապես երիտասարդությանը կոչ էին անում ուժեղացնել հակապետական ելույթները։

Հեղափոխական տրամադրությամբ են համակվում նաև Շուշիի դպրոցների սովորողները և առանձին դասատուներ։ Աշակերտական հուզումներ են տեղի ունենում ռեալական ուսումնարանում և թեմական դպրոցում։ Ընդ որում, գրանցից յուրաքանչյուրը հանդես է գալիս իր պահանջներով։ Միայն թեմական դպրոցի աշակերտների պահանջներն ամփոփված են 41 կետի մեջ։ Ահա դրանցից մի քանիսը. «1) Դպրոցը դասել պետական միջնակարգ դպրոցների շարքը, համալսարան մտնելու հնարավորություն տալով։ 2) Բանալ 7-րդ դասարան։ 3) Զարկ տալ աշխարհարար լեզվին, վանել գրաբարը և ավանդել իբրև կլասիկ լեզու՝ 6 դասարանից։ 4) Ռուսերենը կանոնավոր հիմքերի վրա դնել։ 5) Կրոնական առարկաները կրճատել և դրա փոխարեն ընդլայնել բնագիտականը։ 6) Մաթեմատիկան լրիվ անցնել իր բոլոր մասերով։ 7) Վերացնել թվանշանները և թվանշանային ատեստատը ու մտցնել հուշանշանների նոր եղանակ»[19]։ Բացի վերը նշվածից, աշակերտները պահանջում էին դպրոցը դարձնել ժողովրդական, վերացնել ծեծը, հարստացնել դպրոցական գրադարանը, հաճախակի կազմակերպել երեկույթներ ու ցերեկույթներ, մի խոսքով՝ ծավալել կուլտուրական միջոցառումներ[20]։

1905 թ. փետրվարի 10-ին Շուշիի ռեալական ուսումնարանի աշակերտները դասադուլ են անում, ջարդում լուսամուտների ապակիները, պատռում քարտեզները, վարքագրության ընդհանուր ցուցակը։ Հաջորդ օրը ուսումնարանի աշակերտական սոցիալ-դեմոկրատական խումբը հրապարակում է «Ազատության մարտիկներին» թռուցիկը։ Այն փաստորեն կոչ էր դավառի բոլոր դպրոցներին՝ ի նշան բողոքի, մասսայաբար դասադուլ հայտարարելու մասին[21]։ Հենց այդ օրն էլ դասադուլ են անում նաև Մարինսկի ու քաղաքային դպրոցների սանները[22]։

Բաքվի «Կասպի» թերթի 1905 թ. մարտ ամսվա համարներից մեկի հաղորդման համաձայն Շուշիի աշակերտների հիմնական պահանջներից մեկն էլ եղել է տեղական լեզուների ուսուցումը պարտադիր դարձնելը։

Ղարաբաղի աշակերտության և, ընդհանրապես, բնակչության հեղափոխականացման գործում մեծ դեր խաղաց ՌՍԴԲԿ Կովկասյան միութենական կոմիտեն։ Նրա տարածած ռուսերեն, ադրբեջաներեն և հայերեն կոչերն ու թռուցիկները հասնում էին Ղարաբաղի ամենախուլ անկյունները։ Դրանք մի կողմից մերկացնում էին ցարիզմի ոճրագործությունները, մյուս կողմից՝ աշխատավորներին ցույց տալիս պայքարի ճիշտ ուղին։ Բոլշևիկները Ղարաբաղի աշխատավորներին բացատրում էին, որ ցարիզմի ճիրաններից ազատվելու միակ ելքը շահագործողների դեմ վճռական մարտի ելնելն է։

Սակայն ցարական կառավարությունը, առաջնորդվելով «բաժանիր, որ տիրես» նշանաբանով, ձգտում էր սեպ խրել Անդրկովկասի ժողովուրդների

---

19 «Մշակ», 12. III. 1905։

20 Նույն տեղում։

21 Շ ա հ ե ն Օ հ ա ն ջ ա ն յ ա ն, Անդրկովկասի երիտասարդության հեղափոխական շարժումների պատմությունից, Երևան, 1968, էջ 43։

22 «Մշակ», 24. III. 1905։

զարերից եկող բարեկամության մեջ՝ հրահրելով ազգամիջյան կռիվներ։ Հազարավոր հայ և ադրբեջանցի աշխատավորներ բողոք-բողոքի ետևից էին ուղարկում վերադաս մարմիններին՝ պահանջելով վերջ տալ այդ չարամիտ արյունահեղությանը։ Մամուլը բազմաթիվ նամակներ և ժողովներում ընդունված բանաձևեր էր հրապարակում, որոնք արտահայտում էին հայ և ադրբեջանցի աշխատավորների բողոքը եղբայրասպան կոտորածների դեմ։ Երկու ժողովուրդների ներկայացուցիչներից կազմված հանձնաժողովների և բարեգործական ընկերությունների միջամտությամբ ու օգնությամբ վերջ են տրվում ազգամիջյան ընդհարումներին։ ՌՍԴԲԿ Կովկասյան միութենական կոմիտեն դիմում է վճռական միջոցների։ Ամենից առաջ ուշադրություն է դարձվում այն բանին, որ խարխլվի ազգայնական կուսակցությունների ազդեցությունն աշխատավորական զանգվածների վրա, ամրապնդվեն եղբայրական բարեկամությունն ու համագործակցությունը հայերի և ադրբեջանցիների միջև։ Անդրկովկասի ժողովուրդներին ուղղված մի շարք կոչերում Կովկասյան միութենական կոմիտեն դատապարտում էր ազգային թշնամանք սերմանողներին, բոլոր նրանց, ովքեր փորձում էին ջլատել հայ և ադրբեջանական ժողովուրդների բարեկամությունը և ձգտում աշխատավորներին հեռու պահել հեղափոխական ինտերնացիոնալիզմի դրոշից։

Այսպիսով, 1902—1905 թթ. Ղարաբաղի աշխատավորությունը ներգրավվեց հեղափոխական պայքարի հորձանուտը։ Դրանում մեծ դեր խաղացին մարքսիստական գաղափարների ներթափանցումը գավառ, ինչպես նաև տեղի բոլշևիկյան խմբակների եռանդուն գործունեությունը։

ИЗ ИСТОРИИ РЕВОЛЮЦИОННОЙ БОРЬБЫ ТРУДЯЩИХСЯ КАРАБАХА (1902—1905)

СМБАТ АВАКЯН

Резюме

В конце XIX в. в Карабахе (г. Шуша) была создана революционная организация «Кокон» («Бутон»), самым активным деятелем которой был Ал. Цатурян (Ал. Рубени). Уже в 1902 г. в Шуше действовали марксистские кружки, распространявшие марксистскую литературу, прокламации, газеты и журналы и в том числе номера ленинской «Искры». В деле распространения и пропаганды революционной периодики большую роль сыграл Б. Кнунянц.

В 1905 г. в Шуше была создана группа социал-демократов, поддерживавшая тесную связь с В. И. Лениным и большевистской газетой «Пролетарий». Группа социал-демократов вела большую пропагандистскую работу, а также руководила революционными выступлениями трудящихся уезда.